

բ) Զիրենիկն. — Պատմագիրները կ'ըսեն թէ Յիսուս Աննայի բերուած ժամանակ վերջինս զբաղած էր ուրիշի մը հարցաքննութեամբ. այդ պատճառաւ Յիսուսը ձիթենիի մը կապեցին և յետոյ բանտարկեցին:

Հին դարերէն սկսեալ նոյն ձիթենին նուիրական դարձած է եւ առարկայ ուխտաւորներու բարեպաշտութեան. այնպէս որ վանքն ալ նոյն ձիթենիին առնուովը կոչուած է, ինչպէս յիշեցինք վերև: Նոյն ձիթենին մինչեւ այսօր ալ կը մնայ. դարէ դար հին արմատէն բողբոջած են նոր ճիւղեր որ կը հովանաւորեն եկեղեցիին հիւսիսային անկիւնը՝ շրջապատի մը մէջ: Յովհաննէս եպս. Երուսաղէմացի հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ և կը յայտնէ թէ ինքը լսած է հրաշալիսառն զրոյցներու պատմութիւններ այս ծառին նկատմամբ. այնպէս որ անոր պտուղին կուտը դեղթափի նման ծննդական կանանց, ջերմոտներու և աչացաւ ունեցողներուն բժշկութիւն տուած է. օտարներն ալ շատ յարգ կ'ընծայեն այս Զիրենիին(*) (Հան. էջ 242):

Ս. Զատկի Աւագ հինգշաբթիի երեկոյին հայ ուխ-

կեցին: Քերովբէ դողացեալ եւ սոսկացեալ ի ներքոյ անուոց զինեանս թափուցին: Սերովբէ յայնմիկ ժամուն զթես առ միմեանս բաղիւի սեսանեցան, մինչ չայր սպասաւորն անօրէնութեան զապսակ Տեառն հանդիսավեցնութեան» (Յ. Պ. Ն. էջ 797):

(*) Պաղեստինի բիսոսնեաները կը հաւատան թէ ձիթենին Խաչվերացին (Սեպտ. 13) եւ Ասեուածայայնութեան (Յունվար 6) երկրպագելու համար կը ծնադրէ, վասնզի պիտի չի կրնայ սեսնել Ամենակարողին երեսը, նոյն զիւրեր երկինքի դռները կը բացուին եւ ծովի ջուրերը կ'անուշանան: Կը հաւատան նաեւ թէ բաղարջը նոյն զիւրեր առանց օգնութեան կը խմորի (այս տեղեկութիւնը լսուած է Պէյք Ճալայի, Բերդեհէմի եւ Այն Քէրիմի մէջ): Այս պատճառաւ հիւսիսային Պաղեստինի եւ Սիրիոյ բիսոսնեաները կը հաստատեն թէ քթենին